# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 սեպտեմբերի 2018 թվականի N86-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N29-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2018 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի տարածաշրջաններում տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների անհատական կազմերը և աշխատակարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2016 թվականի հունիսի 3-ի N52-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N29-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշմամբ հաստատված N2 հավելվածում «8. Աշոտ Ասրյան - Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ» բառերը փոխարինել «8. Սմբատ Երեմյան – Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ բառերով:
2. Որոշմամբ հաստատված N3 հավելվածում «7. Օֆելյա Դավթյան - «Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն»-ի սոցիալական աշխատող» բառերը փոխարինել «7.Հերմինե Փափազյան - «Սիսիանի կանանց ռեսուրս կենտրոն»-ի աշխատակից» բառերով:
3. Որոշմամբ հաստատված N4 հավելվածում «7. Սաքո Դավթյան - Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ» բառերը փոխարինել «7. Գագիկ Խալաֆյան - Մարզպետարանի Մեղրիի ՍԱՏԳ-ի մասնագետ» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Կ. Համբարձումյան

2018թ. սեպտեմբերի 6
ք. Կապան